ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(XIX դ. երկրորդ կես)

ԳՈՀԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում արդյունագործության ձեռնարկությունների գերակշռող մասը մանր արհեստանոցներն էին, որոնցում տիրապետում էր ձեռքի աշխատանքը։ Դրանք (ներկատուն, դաբաղանա, օճառի, մոմի գործարաններ, շրաղաց, ձիթհանք, դինգ և այլն) ժամանակի նահանգական հաշվետվություններում և գրականության մեջ վկայակոչված են որպես ֆաբրիկաներ ու գործարաններ, որոնք իրականում, չնչին բացառությամբ, հեռու էին այդպիսիք լինելուց։

Մետաքսյա, բամբակյա, բրդյա թելերի ու գործվածքային (կտավագործություն, մահուդագործություն, գորգագործություն, կարպետագործություն և այլն) արտադրությունը անխզելիորեն կապված էր ներկման արհեստագործության հետ։ XIX դ. կեսին հիշյալ զբաղմունքները Արևելյան Հայաստանում կը-ռում էին երկրի բոլոր շրջաններում տարածում գտած տնային արտադրության բնույթ։ Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, արտադրության այս ձևը հատուկ էր բնատնտեսությանը, որի «ժամանակ հասարակությունը բաղկացած էր տնտեսական բազմաթիվ միասեռ միավորներից (գյուղացիական նահապետական ընտանիքներից, գյուղական համայնքներից, ֆեոդալական կալվածքներից) և այսպիսի յուրաքանչյուր միավոր կատարում էր տնտեսական աշխատանքների բոլոր տեսակները, սկսած հումքի զանազան տեսակների հայթայթումից և վերջացրած դրանց վերջնական պատրաստումով սպառման համար»[1]։ Ա. Ս. Փիրալովի վկայությամբ, XIX դ. 30—40-ական թվականներին Անդրկովկասի բնակլիմայական նպաստավոր վայրերում յուրաքանչյուր գյուղական ընտանիք աշխատում էր տնային արտադրության գործվածքների համար աճեցնել թեկուզ քիչ քանակությամբ բամբակ[2]։ Տնային արտադրության մեջ առաջնակարգ տեղ էր գրավում ջուլհակությունը։ Պարտադիր ձևով բոլոր ընտանիքներում կանայք և աղջիկները հմտանում էին գործվածքային արհեստների մեջ։ Հայկական մարզում կար 4206 դազգահ, որոնցով տարեկան արտադրվում էր 500 000 արշին կտավ[3]։ Արտադրության այս ձևը մասամբ պահպանվեց նաև կապիտալիստական հարաբերությունների ժամանակ. «...տնային արդյունաբերության մնացորդներ համարյա միշտ պահպանվում են այնտեղ, որտեղ կա մանր գյուղացիություն»[4]։

Մինչև XIX դ. 60—70-ական թվականները Հայաստանի գործվածքային արտադրության մեջ համարյա գոյություն չուներ աշխատանքի բաժանում։ Նույն աշխատող մարդու ձեռքով էին անցնում արտադրական բոլոր պրոցեսները՝ հումքի մաքրումը և որակավորումը, մանելը և գործելը։ Միայն ներկելն էր, որ երբեմն պատվիրվում էր տնայնագործ ներկարարներին։ 1868 թ. Երևանի նահանգում կար 112 կտավագործ և դաշող վարպետ, 75 ենթավարպետ ու 42

---

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 22։

[2] А. С. Пвралов, Краткий очерк кустарных промыслов Кавказа, СПб., 1913, с. 17.

[3] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, с. 854.

[4] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 405։

աշակերտ[5]։ Դրանց մեծ մասը քաղաքներում ընդգրկված էին համքարությունների մեջ։ 1863 թ. տվյալներով Ալեքսանդրապոլ քաղաքում այդ կազմակերպության մեջ աշխատում էին 50 վարպետ, 10 ենթավարպետ և 30 աշակերտ, Երևան քաղաքում՝ ներկողների համքարության մեջ՝ 31 վարպետ, 51 ենթավարպետ, 31 աշակերտ, իսկ Ալեքսանդրապոլում՝ համապատասխանաբար՝ 8, 1 և 9[6]։

Ներկման արհեստը լայն տարածում ուներ Արևելյան Հայաստանի բոլոր բնակավայրերում. «...ներկատներ կային ոչ միայն Երևանում և մյուս քաղաքներում, այլև գյուղական վայրերում՝ Դարաչիչակում, Գյոկչայում, Զանգիբասարի Ուլուխանլու գյուղում, Գառնի բասարի և Վեգի բասարի Իմամ-Շահալի, Զիկդամլու, Յուվա, Արտաշատ, Արկ-Ուոի, Վեգի-Ուլի, Դավալու, Արալխ, ինչպես նաև Շարուրի մահալի Արաբ-Ենգիշա և Մուղանլու բնակավայրերում, Սուրմալուի մահալի Բլուր և Փանիկ գյուղերում։ Ներկատներ կային նաև Դարաքենդ, Փարչենիս, Քուպ և Մոլլա-Քամար, Թալինի մահալի Մաստարա, Սարդարապատի մահալի Էշմիածին և Ագարակ գյուղերում, ինչպես նաև Նախիջևանի Խոյ և Ապրակունիս բնակավայրերում»[7]։

Ներկատները հիմնականում բաժանվում էին երկու խմբի՝ բոյախչիների (կապույտ և կանաչ գույնի ներկողներ) և շիլաչիների (կարմիր գույնի ներկողներ)։ Իսկ մնացած գույները տնայնագործ արհեստավորները ստանում էին տնային պայմաններում։ Ըստ Ի. Շոպենի, Հայկական մարզում գործում էր 29 ներկատուն[8], որոնք ներկում էին միայն կապույտ։ Ի տարբերություն մյուսների, բոյախչիները կազմում էին առանձին տնայնագործ արհեստավորների շարք և 1850—60-ական թվականներին արհեստավորների ցուցակներում նրանց թվաքանակը նշվում էր առանձին։

Կարսի մարզում տնային պայմաններում թելեր և գործվածքներ ներկելու համար օգտագործում էին շիբ և զանազան բույսեր՝ թրթնջուկ, տորոնի արմատներ, խնձորի ծաղիկ կամ գոճամորի, դաղձ, սալոր, դժնիկ կամ փոկուռ, քոսաբույս, կաթնուկ և ճահճի տիղմ, իսկ լեղակով (ինդիգո) և որդան կարմիրով ներկելու համար դիմում էին ներկատներին[9]։

Ներկման տնային միջոցներն ու գիտելիքները անցնում էին ժառանգաբար և աստիճանաբար կատարելագործվում։ Այս աշխատանքներով մեծ մասամբ զբաղվում էին կանայք, որոնցից շատերը ներկերի բաղադրատոմսերի լավ գիտակներ էին։ «Նրանք իրենց գիտցած միջոցները գաղտնի էին պահում և երբեմն էլ իրենց հետ տանում գերեզման...»[10]։

Անդրկովկասում օգտագործվող ներկերը երկու տեսակի էին՝ քիմիական-անիլինային և բուսական ու կենդանական ծագում ունեցող ներկեր։ Վերջիններից մի մասը բերվում էր դրսից՝ Հնդկաստանից, Պարսկաստանից և Միջին Ասիայից, իսկ մյուս մասը մշակվում էր տեղական միջոցներով։ Դրանք բազմազան էին՝ թթենու դեղնած տերևներ, սև խաղողի մնացորդներ, բույսերի արմատներ, խոտեր, սուսանի կոչվող ծաղիկ, սոխի կեղև, հատապտուղներ, կապույտ սիրիկ, որը կոչվում էր «զամբախի», տորոն, ծառի արմատներ և այլն, «...Ներկա ժամանակում կարելի է ցույց տալ ավելի քան 26 տեսակի ներկանյութ, որոնք օգտագործվում են տեղացի ներկարարների կողմից։ Դրանցով նրանք հնարավորություն ունեին ստանալու տարբեր գույներ և երանգներ»[11]։

---

5 ՍՍՀՄ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ՊԿՊԱ), ֆ. 1268, ց. 14, գ. 153, թ. 291։

6 «Сборник статистических сведений о Кавказе», т. 1, Тифлис, 1869. отд. III. с. 31—32, 40—43.

7 И. Шопен, նշվ. աշխ., էջ 859։

8 Նույն տեղում, էջ 860։

9 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 189, թ. 26։

10 А. С. Пиралов, նշվ. աշխ., էջ 26։

11 «Кавказская шелководческая станция», 3-й вып., т. XII, Тифлис, 1902, с. 19.

Բուսական և կենդանական ծագում ունեցող ներկերը ընդհանրապես տարածված էին գյուղական վայրերում, որտեղ տնայնագործական եղանակով ներկելու արհեստը համեմատաբար երկար պահպանվեց։ «Գույների գործածությունը մեր շատ գյուղերում դեռևս նախնական դրության մեջ է, այսինքն՝ բուրդ կամ թել ներկելու համար նրանք դիմում են դարձյալ իրենց ծանոթ բույսերին ու քարերին և նրանցից են ստանում իրենց հարկավոր եղած ներկերը։ Օրինակի համար, կարմիրը ներկում են տորոնով, դեղինը՝ իշակաթնուկ կոչված վայրի բույսով կամ դաղձով, նարնջագույնը՝ սոխի կճեպով, կապույտը ուղարկում են ասիական ներկատուն՝ «բոյախանեն», սևը՝ «պուտ» կամ «մանր լալա» կոչվող բույսով, բորդո կամ հինայի գույն ստանում են քարագյոզ կոչվող չորացած մամուռից և այլն»[12]։ Սև գույնի համար օգտագործում էին նաև նոր հասունացող ընկույզի կանաչ կեղևը և նռան տերևները, թխածաղիկ, մասրի, թրիմ և այլն։ Այն ստանում էին նաև ճապկի կոչվող բույսից, որի դալար ճյուղերը և տերևները ներկվող թելի կամ գործվածքի հետ միասին եռացնում էին, որից հետո ընկղմում երկաթարջասպի լուծույթի մեջ։ Վերջինս նույնպես ստանում էին տնային պայմաններում. բնական տեսքով այն բաց դեղնավուն հող էր, որը, խառնելով համապատասխան չափի գարու, ոչխարի գոմաղբի և նավթի հետ, կրակի վրա բովում էին մինչև սևանալը, և երկաթարջասպը, կամ, ինչպես ժողովուրդն էր անվանում սև հողը (կարա-թորփախ), պատրաստ էր. ներկման արհեստագործության մեջ սա շատ կարևոր նյութ էր։ Տնային պայմաններում, տորոնով ներկված իրը թթու թանով եռացնելիս ստացվում էր ալ կարմիր, իսկ եթե այն դնեին անասունի մեզի կամ կալիումի լուծույթի մեջ, կստացվեր մուգ կարմիր։ Կալիում և նատրիում պարունակող խոտաբույսեր աճում էին Արաքս և Քուռ գետերի հովիտներում[13]։ «Զոլա», «չոգան» կամ «չորան» (տարբեր վայրերում տներ տարբեր անվանում) կոչվող բույսը հարուստ էր նատրիումի աղերով և այրման միջոցով վերածվում էր ածխաթթու նատրիումի, որը կոչվում էր կալաքար (լվացքի սոդա)։ Դրա ստացման եղանակը շատ պարզ էր ու հասարակ. մոտավորապես երկու արշին խորությամբ փորված փոսի բերանը ծածկում էին քարերով, վրան լցնում այդ բույսի հսկայական զանգված և այրում։ Առաջացած տաք հեղուկը անցքերից հոսում էր փոսի մեջ, այն զգուշությամբ ծածկում էին խոնավ հողով։ Երկու օր թողնելուց հետո կալաքարը պատրաստ էր[14]։ Սա օգտագործում էին նաև օճառի արտադրության մեջ։ Մեկ խալվարը (30 փութ) վաճառվում էր 18—25 ռուբլով[15]։ Կալաքարի պատրաստելը տիպիկ տնայնագործական զբաղմունք էր։ 1868 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում վաճառվել էր 150—200 հակ (իշաբեռ) կալաքար[16]։ Դարավերջին քիմիայի զարգացման հետևանքով ստանում էին լվացքի սոդա, որը կալաքարի համեմատությամբ շատ էժան էր ու առատ[17]։

Ներկելիս ներկանյութին խառնում էին նաև սալորի պաստեղ, կալաքար և այլ նյութեր։ Ինչպես տեսնում ենք, Հայաստանը շատ հարուստ էր ներկատու բույսերով ու այլ նյութերով, և ցարական կառավարող շրջաններն ի սկզբանե սկսեցին ուշադրություն դարձնել դրանց արտադրության վրա։ Դեռևս XIX դ. 20—30-ական թվականներին փորձեր են արվել աճեցնելու ինդիգո՝ լեղակենու բույսը, սակայն այն խափանվել է։ Մեծ ուշադրություն էր դարձվում հայկական «կարմիր որդան» կոչվող միջատի վրա, որից ստացվող ներկանյութը հիմնականում օգտագործվում էր էջմիածնի վանքի տպագրության մեջ։ 1833 թ.

---

12 «Տնայնագործների համագումար», Թիֆլիս, 1909, էջ 227։

13 Г. Я. Оганесянц, О туземных красках («Кавказское сельское хозяйство», Тифлис, 1898, № 259, с. 818—820).

14 «Մուրճ», 1896, № 3—4, էջ 409, տե՛ս նաև К. Хатисов, Кустарные промыслы Закавказского края, Тифлис, 1891, с. 87.

15 «Кавказский календарь на 1851 г.», Тифлис, 1850, с. 19.

16 «Сборник статистических сведений о Кавказе», т. 1, с. 42.

17 «Գյուղատնտես», 1910, № 18, էջ 284։

Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենը Հայաստան գործուղեց մի աստիճանավորի՝ ուսումնասիրելու ներկանյութի ստացման և օգտագործման մեթոդները[18]։

Գործվածքների և թելերի ներկման հին միջոցներն ունեին շատ դրական կողմեր. գույներն աչքի էին ընկնում իրենց նուրբ երանգներով և դիմացկունությամբ։ Այդպիսի ներկանյութերով ներկված բրդյա թելերից գործված գորգն ուներ գույների ներդաշնակություն, իսկ բուրդը դառնում էր ավելի փափուկ ու փայլուն, մեծանում էր գորգի թավշությունը[19]։ Հիշյալ ներկանյութերը ոչ միայն հետ չէին մնում գործարանային միջոցներով արտադրված ներկանյութերից, այլև իրենց որակով գերազանցում էին դրանց։ Սակայն ստացման և մշակման եղանակը դժվարին էր և պահանջում էր մեծ աշխատանք։

Ներկման տեխնիկան պարզ էր ու հասարակ։ Այն կատարվում էր կավե կամ պղնձե մեծ ամանների մեջ, որոնք դրվում էին բակի մի հարմարավետ անկյունում, օջախի վրա և մերթընդմերթ խառնվում էր, որպեսզի ներկը հավասար տարածվեր գործվածքի կամ թելի վրա։ Ներկումը կատարվում էր ուշ աշնանը, որովհետև ամռան և աշնան ամիսներին հավաքում և մշակում էին համապատասխան խոտաբույսեր և պտուղներ։ Տնայնագործ ներկարարի աշխատանքը եկամտաբեր էր. մեկ մետր բրդյա գործվածքը ներկելու համար վերցնում էր 8 կոպեկ, իսկ բամբակյա գործվածքներից՝ 10 կոպեկ[20]։ Ներկարարներն աշխատում էին միայն պատվերով. պարզ է, նրանք չէին կարող մյուս արհեստավորների նման արտադրել շուկայի համար, քանի որ ներկանյութից զատ ոչինչ չունեին, և տարբեր տեսակի գործվածքներն ու թելերը ներկատուն էին բերում պատվիրատուները, որոնք ներկարարներին վճարում էին աշխատանքի վարձը։ Լավագույն դեպքում ներկարարը ներկանյութը կարող էր վաճառել պատահական գնորդներին։ Յուրաքանչյուր ներկարար-տնայնագործի տարեկան մաքուր եկամուտը կազմում էր 200—500 ռուբլի[21]։

1868 թ. Երևանի նահանգում գործում էին 426 տնայնագործ վարպետ, 86 բանվոր ու 240 աշակերտ[22], կար 49 արհեստանոց[23], որոնք կոչվում էին «գործարաններ»։ Վերջիններիս մեծ մասը գտնվում էր քաղաքներում, քաղաքատիպ վայրերում, մասամբ նաև՝ գյուղերում։ 1873 թ. տվյալներով նահանգում եղած 80 ներկատնից (131 բանվորով և 9950 ռ. արտադրության գումարով)[24] 73-ը գործում էին քաղաքներում, հատկապես Երևանում և Նոր Բայազետում։ Ծանր գործվածքների և թաղիքեղենի, հատկապես այծենակաճների ներկումը դժվար էր տնային պայմաններում. այն կատարվում էր հատուկ ներկատներում՝ կաղնու և լաստենու կեղևներից պատրաստած թունդ լուծույթով, որը բաժանում էին երկու մասի. առաջինի մեջ ավելացնում էին 1,5 ֆունտ երկաթարջասպ, որի մեջ այծենակաճը պահում էին մեկ օր. լվանալուց հետո այն ընկղմում էին լուծույթի երկրորդ մասի մեջ, ավելացնելով սանդալենու (ճանդան՝ ծառ) խաշուկը, որից հետո մաքուր ջրով պարզաջրում էին։ Վերջին ջրի մեջ երբեմն լցնում էին ձվի սպիտակուց՝ փայլի համար։ Իսկ Թիֆլիսում, Ադելխանովի գործարանում, այծենակաճները սկզբում ընկղմում էին խոշոր եղջերավոր անասունների մեզի կամ երկաթարջասպի և սոդայի խառնուրդի մեջ, որից հետո ներկում էին կամպեշ (համանուն ծառից ներկ, որն օգտագործվում

---

18 М. К. Рожкова, Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. п русская буржуазия, М., 1949, с. 117.

19 А. С. Пиралов, նշվ. աշխ., էջ 26։

20 И. Шопен, նշվ. աշխ., էջ 860։

21 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1268, ց. 10, գ. 134, թ. 226։

22 Նույն տեղում, ց. 16, գ. 12, թ. 329—330։

23 Նույն տեղում, թ. 293։

24 Նույն տեղում, ց. 19, գ. 180, թ. 141։

էր կաշվի և տեքստիլ արդյունաբերության մեջ) բուսական ներկով, որի մեկ վուիթը 12 ռուբլով ներմուծվում էր Գերմանիայից[25]։

Ելիզավետպոլում այդ նպատակի համար գործածում էին բալգյա կոչվող բույսը, որի մեկ ֆունտը (արժեքը՝ 4 կոպ.) ներկում էր չորս ֆունտ թել։ Ցանկացած դեպքում այն փոխարինում էին սև սանդալ կոչվող բուսական ներկանյութով։

Շուշի քաղաքում արտադրվող «ալիշա» մետաքսե գործվածքը (սպիտակեղենի համար) ներկում էին տորոնաներկի և որդան կարմիրի խառնուրդով։ Երեք ֆունտ մետաքսաթելի ներկման համար պահանջվում էր մեկ ֆունտ որդան կարմիր, երկու ֆունտ տորոնանյութ և երեք ֆունտ շիբ (квасц)։ Մեկ ֆունտ տորոնն արժեր 15—20, իսկ որդան կարմիրը՝ 60—65 կոպեկ։ Նախկինում ներկանյութերն այստեղ ավելի թանկ էին[26]։ 1895 թ. Շուշի քաղաքում գործում էր 12 ներկատուն (10 «բոյաջի»), որտեղ ընդգրկված էին 12 վարպետ, 2 բանվոր և 8 աշակերտ[27], իսկ Ախալքալաքում՝ 21 ներկատուն (8 բոյախան)՝ 5 աշակերտով[28]։ Վերոհիշյալ գավառներում ներկատներ ընդհանրապես չկային։ Ներկատներում զբաղվում էին նաև գործվածքների (հատկապես կտավի) և պաստառների դաջումով, որը կատարվում էր փայտյա հատուկ նախշագործիքով։ Նախշերի ձևից (պարզ, բարդ) ու քանակից էլ կախված էր տվյալ կտորի արժեքը։ Այդ պատճառով ներկված ու դաջված գլխաշորերի ու թաշկինակների գները տատանվում էին 30 կոպեկից մինչև 1 ռուբ. 20 կոպեկ[29]։

Այս տվյալներից երևում է, որ ներկման աշխատանքները հիմնականում կենտրոնանում էին խոշոր արհեստանոցներ ունեցող ներկարարների ձեռքում։ Դրան նպաստում էր նաև այն, որ ներկման արտադրության մեջ սկսեցին մուտք գործել քիմիական էժանագին ներկանյութերը, որոնք դուրս էին մղում հին միջոցներն ու եղանակները։

Դեռևս 1826—1828 թթ. առաջին անգամ տորոնի արմատներից ստացվեց ալիզարին կոչվող ներկանյութը և տրվեց դրա քիմիական կառուցվածքը, իսկ 1869 թ. մշակվեց արհեստական ստացման եղանակը։ Համարյա նույն ժամանակահատվածում հայտնաբերվեց նաև մեկ ուրիշ քիմիական ներկանյութ՝ անիլինը։ Այս ներկանյութերը շատ էժան էին և ունեին վառ գույներ։ 1870—1880-ական թվականներին դրանք մտան լայն գործածության մեջ։ Սակայն արհեստավոր ջուլհակների ոգևորությունը կարճ տևեց. այդ ներկերը ամենևին դիմացկուն չէին լույսի նկատմամբ և կարճ ժամանակում գունաթափվում էին։ Այդ հանգամանքը շատ վատ ազդեցություն ունեցավ գորգերի արտադրության վրա, և դրանց գինը ընկավ երկուսից-երեք անգամ[30]։ Իսկ ներկող արհեստավորներն այլևս չէին ուզում վերականգնել հինը, որովհետև այն շատ ջանք ու աշխատանք էր պահանջում։ Ժամանակի ընթացքում քիմիական ներկանյութերը կատարելագործվում էին։ Այսպես՝ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Մոսկվայում գործում էր ներկեր արտադրող «Ֆրիգրիխ—Բայեր» ֆիրման, որի ներկանյութերը շատ որակյալ էին և օգտագործվում էին դյուրությամբ։ «Այդ ֆիրման արտադրում էր 96 գույնի ներկ, որոնց կից գնացուցակի մեջ ռուսերեն, հայերեն, վրացերեն, թուրքերեն բացատրվում էր, թե որ գույնը ինչպես պետք է ներկել և մեկ ֆունտ թել ներկելու համար որքան ներկ պետք է օգտագործել»[31]։

---

25 Ст. Гулишамбаров, Обзор заводов и фабрик Закавказского края, Тифлис 1894, с. 264.

26 Նույն տեղում։

27 «Ազգագրական հանդես», 1897, գ. Բ, էջ 97։

28 Նույն տեղում, 1897, գ. Ա, էջ 213։

29 Ст. Гулишамбаров, նշվ. աշխ., էջ 264։

30 А. С. Пиралов, նշվ. աշխ., էջ 29։

31 «Տնայնագործների համագումար», էջ 70։

Այսպիսի պայմաններում բուսական ներկանյութերը կորցնում էին իրենց երբեմնի նշանակությունը։ Սկզբնաղբյուրներից մեկում կարդում ենք, որ 1858 թ. Անդրկովկասից Նիժգորոդի տոնավաճառ էր տարվել (այլ ապրանքների հետ միասին) 140 000 փութ (մի մասը նաև Հայաստանից) տորոն. մեկ փութը վաճառվել էր 12—13 ռուբլով, իսկ երկրորդ տեսակը՝ 10 ռ. 75 կոպեկով[32]։ Այդ մակարդակը պահպանվել է նաև 1870-ական թվականներին, իսկ 1900-ականներին՝ տորոնի գինը իջել էր մինչև երկու ռուբ.[33]։

Ներկատների ընդհանուր տվյալները XIX դ. երկրորդ կեսին

Երևանի նահանգում[34]					Կարսի մարզում[35]			
տարեթիվը	վարպետ	բանվոր	աշակերտ	արտադրության գումարը (ռուբլիներով)	տարեթիվը	վարպետ	բանվոր	արտադրության գումարը (ռուբլիներով)
1850	50	—	—	—	1886	2	6	—1580
1858	56	80	—	4450	1890	2	4	—1960
1865	60	75	39	—	1895	4	8	—2200
1870	70	99	—	9530	1898	4	8	—2160
1875	15[36]	42	—	1530	1899	5	9	—2160
1880	43	45	—	1500	1900	6	11	—2250
1885	39	74	—	3550	1903	4	8	—2150
1891	54	69	—	20770				
1896	40	48	—	5290				
1900	60	83	—	8334				
1904	56	92	—	7339				

Բերված տվյալները ցույց են տալիս, որ, չնայած որոշ տատանումների, արտադրության չափերը հիմնականում պահպանել էին նույն մակարդակը, և ներկարարությունը կենտրոնանում էր գլխավորապես քաղաքներում և մարզաշատ բնակավայրերում։ 1891 թ. վկայագրված 54 ներկատնից 15-ը գործում էր Երևանում, 8-ը՝ Նոր Բայազետում[37], իսկ Կարսի մարզում համարյա բոլորը՝ Կարս քաղաքում։ Կարևորն այն է, որ այս արհեստագործությունը շարունակում էր ոչ միայն որոշակի դեր խաղալ երկրի արտադրական կյանքում, այլ նաև առկա էին նկատելի տեղաշարժեր՝ կապված քիմիական գիտությունների և տնտեսական կյանքի ընդհանուր զարգացման հետ։

---

32 «Кавказское общество сельского хозяйства», 1859, № 1, ч. II, с. 7—8.

33 П. В. Гугушвили, Развитие промышленности в Грузии и Закавказье в XIX—XX вв., Тифлис, 1957, с. 156.

34 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1268, ց. 5, դ. 359, թ. 91—92, ց. 10, դ. 170, թ. 149, ց. 11, դ. 142, թ. 378 (նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 125, ց. 1, դ. 15, թ. 35—36), ց. 17, դ. 36, թ. 196, ց. 21, դ. 174, թ. 289—290, ց. 25, դ. 297, թ. 260, ֆ. 1284, ց. 223, դ. 123, թ. 80—81, ֆ. 1263, ց. 2, դ. 5329, թ. 43, «Обзор Эриванской губернии за 1891, 1900 и 1904 гг.», ведомость № 2.

35 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1263, ց. 1, դ. 4655, թ. 229, ց. 2, դ. 4913, թ. 12, դ. 5554, թ. 117, «Обзор Карсской области за 1895, 1898, 1903 гг.», ведомость № 2.

36 Նախորդ և հետագա տարիների տվյալները համեմատելիս (1876—1878 թթ.) կար 43—45 ներկատուն (տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1268, ց. 23, դ. 249, թ. 286, ց. 24, դ. 231, թ. 211)։ 1875 թ. նշված 15 ներկատները ողջ նահանգի համար քիչ են. դա համոզիչ չէ։

37 «Обзор Эриванской губернии за 1891 г.», ведомость № 2.

КРАСИЛЬНОЕ ДЕЛО В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

(вторая половина XIX в.)

ГОАР АРАКЕЛЯН

Резюме

Во второй половине XIX века красильни Восточной Армении были мелкими мастерскими, в которых превалировал ручной труд. В данный период это занятие носило характер домашнего производства и было распространено во всех районах страны. Эта форма производства сохранилась также в период капитализма.

Народные методы и знания крашения передавались по наследству и постепенно совершенствовались. Из красок растительного и животного происхождения использовались индиго и кошениль. Мастера-красильщики работали на заказ и в качестве товара случайному покупателю продавали только краску.

В 70—80-х гг. XIX в. вошли в употребление краски химического производства, которые были усовершенствованы в начале XX в.

Несмотря на некоторые колебания, размеры красильного производства во второй половине XIX в. в Восточной Армении в большинстве случаев сохранили свой уровень и самое главное—это ремесло продолжало не только играть определенную роль в производственной жизни страны, но и были налицо заметные сдвиги, связанные с развитием химической науки и общего развития экономической жизни Российской империи.